

Այս հայերը դադթականներու այն սերունդին կը պատկանէին՝ որոնք մեր արքայանիստ Անի քաղաքին աւերումէն վերջ (1239) տեղափոխուեցան նախ Խրիմու թերակղզին, ապա թշնամիներու յարձակումներէն բռնադատուած, Ուքրայինայի վրայէն Լեհաստան քաջուեցան: Անկից դրացի պետութեան Մոլտաւիա անցան: Մոլտաւիոյ յունական ծաղումով պետերը, կրօնական ու ցեղային մոլեռանդութենէ մղուած, նորանոր հալածանքներ յարուցին, ուստի շուրջ երեք հազար ընտանիք նորէն պանդրխտութեան ցուպը ձեռք առած՝ դէպի դրացի Թրամսիլվանիան ուղղեցին իրենց քայլերը:

Թրանսիլվանիա տեղաւորուած հայ ընտանիքներու անունները շատ անգամ կը ցուցնեն իրենց պանդխտութեան օրերուն կտրած ճամբան. օրինակի համար Անեցի, Կոպչա, Ուրմանցի, Պալթա, Փերսիան, Փոթոցի, Լենկէլ ($\equiv$ Լեհացի), Կամենցի, Բորպուլի, Մուտովան:

Սիրավիւր հիւրընկալուած հայերուն խաղաղ կեանքը շուտով խռովեցին պատերազմները։ Հունգարացիները Փրանկիսկոս Ռաքոցի Բ. իշխանապետի առաջնորդութեան տակ գէնք աւելին (1703) Սւստրիոյ Հապսբուրգի թագաւորական տան ճնշող քաղաքականութեան դէմ՝ ազատութիւն եւ անկախութիւն ձեռք բերելու համար։ Հունգարացիներու կռիւն մէջ միութիւն չկար․ «Վասն ազատութեան» (pro libertate) պարզուած դրօշները խոնարհեցան (1711)։ Նոյն այս կռիւը կրկնուեցաւ 1848ին։ Փարիզէն մեկնող ազատութեան շարժումը անցաւ բոլոր Եւրոպայի վրայէն։ Հունգարիոյ մէջ մէկ տարի տեւող պատերազմը, ոչ թէ աւստրիացի զինուորներու գերազանցութեամբ վճռուեցաւ, այլ կայսրէն, որ միանգամայն թագաւոր էր Հունգարիոյ, օգնութեան կանչուած ճարական բանակներով, որոնք ստիպեցին անձնատուր ըլլալ հունգարական գէշ զինուած բանակը։

Հայերէն չափեր կոռւեցան Հունգարացիներուն միացած: Զարմանալի է որ այս փոքրաթիւ ազգը երեք առաջնորդ զօրավարներ տուաւ: Անոնցմէ երկուքը, Էրնէսթ Քիշ (Kiss Ernö = Պզտիկեան) ու Կուլիէլմոս Լազար (Lázár Vilmos = Ղազարեան) աստորիացիներէն բռնուեցան ու մահուան դատապարտուեցան: Երրորդը Յովհաննէս Յեց (Czetz János = Յեցեան) զօրավարը արտասահման փախաւ ու ի վերջոյ Արճենթինայի (Պուէնոս-Այրէս) զինուորական դպրոցին հիմնադիրն ու առաջին հրամանատարը եղաւ:

1848-49ի պատերազմներէն վերջ վաթսուէն տարի տեւող խաղաղութեան շրջան մը յաջորդեց: Այս կէս դարը բեղուն աշխատութեամբ անցաւ:

Հայութեան օտարացումը սկսաւ ու երթալով աւելի սաստկացաւ իրենց թրանսիլվանիա մուտքէն անմիջապէս վերջ, որուն պատճառն էր հունգարացիներուն սիրալիր ընդունելութիւնը: Իրարու հետ դարաւոր կենակցութիւնը այս երկու ազգերը ձուլեց առանց վնասելու սակայն ազգային նկարագրին: Թրանսիլվանիոյ հունգարացիներուն հիւրասիրութիւնն ու բարեացակամութիւնը հնարաւոր դարձուց հայերուն — նիւթական ապրուստի հետ — ազգային նկարագիրն ալ պահպանել եւ

իրենց հին աւանդութիւններուն համաձայն ապրիլ: Ատոր մեծապէս նը-
պաստեց Մխիթարէն, ինչպէս նաեւ Օգոստոսիոս Վերդար (1655-1715)
Հայ կաթողիկէ եպիսկոպոսէն հաստատուած չորս ժողովրդապետութիւն-
ներու մեծ գործունէութիւնը: Ուստի պէտք եմ մասնաւոր ուշադրութիւն
դարձնել Թրանսիլվանիոյ չորս եւ Պոտոսպիշտի միակ Հայ կաթողիկէ
ժողովրդապետութիւններու գոյութեան եւ անոնց բարոյական ու նիւթա-
կան բարձրացումին:

կան բարձրացումին։

Հայերը սկիզբը Հունգարիոյ քաղաքական կեանքին մէջ դեր չունեցան։ Սակայն Թրանսիլվանիոյ իշխանապետներէն ու Հունգարիոյ թագաւորներէն ընդունած զանազան մենաշնորհներու օժանդակութեամբ՝ աւելցնելով իրենց լատինացի թրանսիլվանիոյ արուեստներու եւ վաճառականութեան բարդաւաճման համար։ Շատ նշանաւոր ու փնտռուած էր ռականութեան բարդաւաճման համար։ Շատ նշանաւոր ու փնտռուած էր հայերէն հիմնուած կաշկերծութիւնը (Kordovan անուանով)։

Հայերէն հիմնուած կաշեգործութիւնը (Kovalevsky) Արտասահմանի վաճառականութիւնն ալ իրենց ձեռքով կը կատարուէր: Անասուններուն վաճառականութեան համար հողային մեծ ստացուէր: Անասուններուն վաճառականութեան համար արօտավայրերու: Վերջին ժառանգներու պէտք ունէին, մանաւանդ երբ ալիւս անասուններու մանակները — մեծ պատերազմէն վերջ — երբ ալիւս անասուններու վաճառականութիւնը այնքան շահաբեր չէր՝ Հունգարիոյ հարաւային մասին մէջ հայ մեծ հողատէրերու դասակարգ մը առաջ եկաւ այս վաճառականներէն:

[illegible]

Հայերը Հունդարիոյ (Թրանսիլվանիոյ) անտառական զանգուշեցման համաժողովին մէջ ու կէս դար պատուաւոր դեր մը ունեցան: Ժժ դարու կէսին — 1848ի դէպքէն վերջ — երբ Հունդարացիները ստիպուեցան հրաժարիլ իրենց անկախութեան պահանջներէն, հայերն ալ մտաւորական ու քա-

ղաքական շրջանակներու մէջ բարձր տեղեր դրաւեցին. շատեր հասան մինչեւ նախարարութեան ու քաղաքական կեանքի մէջ ցայտուն դէմքերէն համարուեցան: Հունդարիոյ ձեմարանի անդամներուն մէջ ալ կը գտնենք ուսուցչապետներ. շատ մը հայեր նմանապէս փայլեցան զբաղակալութեան ու գեղարուեստի մէջ: Քաղաքացիական կեանքի ամէն ճիւղի մէջ առաջնորդող դերեր ունեցան, ինչպէս նաեւ զինուորականութեան մէջ բարձր աստիճաններ ստացան: Ուրեմն հայերը հունդարական կեանքին մէջ ամէն աստիճանի վրայ իրենց դերը կատարեցին եւ այսօր ալ զիրենք դեռ կը գտնենք նոյն դիրքերուն վրայ:

Տեսանք թէ ինչպէս հայերը անցեալին մէջ Հունդարիոյ չար ու բարի բախտին մասնակցեցան: Այս դրութիւնը չփոխուեցաւ նաեւ վերջին տասնամեակներու մէջ ալ: Միասին կրեցին առաջին համաշխարհային պատերազմի (1914—1918) տառապանքները: Համաշխարհային պատերազմէն վերջ, արեւելքի տեղահանութիւններէն ու ջարդերէն ազատած հայերէն շատեր իրենց պանդխտութիւնը վերջացուցին Հունդարիա, ուր կ'ապրին մինչեւ այսօր. մինչ ուրիշներ շարունակեցին իրենց ճամբան դէպի արեւմուտք: Հոս մնացողները, իրենց ցեղին սէրը արժարձեցին դրեթէ երեք դարէ ի վեր Հունդարիա ապրող հայութեան մէջ: Ասոնք օրինակ տուին թէ որքան զոհողութիւն ընելու կարող է զօրաւոր հաւատք ունեցող եւ նախնիքներու աւանդութիւններուն փարոզը: Մեծագոյն դաս մը պէտք ենք առնել: Հունդարահայերէն շատեր, որոնք յարեցան Հունդար ազգին՝ ստիպուեցան թողուլ թրանսիլվանիան, իրենց նախնիքներու երկիրն ու իրենց բոլոր հարստութիւնը՝ հաստատուելու համար անդամատուած Հունդարիոյ մէջ:

Առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ թրիանոնի խաղաղութեան դաշինքով (1921) Ռումանիոյ կցուած թրանսիլվանիոյ չորս հայկական ժողովրդապետութիւններուն հաւատացեալներու թիւը շատ նւազեցաւ: Երբեմնի բոլորովին հայ միջավայրերու բնակիչները ցրուեցան թրանսիլվանիոյ եւ Հունդարիոյ մէջ: Վտանգը մօտ է որ հայկական քաղաքները կորսնցնեն իրենց ազգային նկարագիրը, — որովհետեւ արեւելքէն նոր հայկական արիւն չի դարձնուած արեւմտեան հայերէն, եւ անոնք այլեւս պատմութեան պիտի անցնին:

Այս տողերս գրողը 1920ին միութեան կոչ մ'ըրաւ Հունդարահայերուն, իբրեւ նպատակ դնելով «Արժարձել սէրը մեր հայ անցեալին եւ աւանդութիւններուն, հունդարահայերու մէջ միութեան զգացումը արթնցնել, պահպանել երբեմնի փառաւոր եւ այսօր ալ կենսունակ հայ ազգութիւնը, ծանօթացնել Ասիոյ մէջ քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան առաքեալները»:

Այս նպատակին համար դեռ այսօր ալ անդուլ կ'աշխատի ան:

Այս վերջին պատերազմի արհաւիրքներէն հայերը հունդարացիներու հետ Ֆիլիքապէս տկարացան ու տնտեսապէս փճացան: Վէրքը զոր պատերազմը հողիներուն մէջ բացաւ, տակաւին բաց է եւ կիզիչ: Մեր քաղաքներէն ու գիւղերէն շատերը աւերակներու վերածուած են եւ անոնց

մէջ, դժբախտաբար, առաջինն է երկրին մայրաքաղաքը, Պուտափէշտ: Դանուրը, Եւրոպայի մեծագոյն գետերէն մէկը, որ կը բխի Գերմանիայէն ու կ'անցնի Հունդարիոյ, Եուկուսուիոյ եւ Պուկարիոյ մէջէն թափուելով ու կ'անցնի Հունդարիոյ, Եուկուսուիոյ եւ Պուկարիոյ մասը որ հին Սեւ ծով՝ քաղաքը երկու մասի կը բաժնէ: Դաշտային մասը որ հին Քաղաքն է՝ Փէշտ կը կոչուի, մինչ լեռնայինը՝ Պուտա: Դանուրի եզերքը բարձրացող բլրան վրայ, ասկէ դեռ երկու տարի առաջ, իր բոլոր չքերէն թափամբ կանգնած էր թագաւորական պալատը. այսօր այրած, մրոտած զուլթեամբ կանգնած էր թագաւորական պալատը: Եւրոպայի զարաւոր տուններու պատերը կը ցցուին դէպի կապոյտ երկինք: Եւրոպայի զարաւոր տունները կը յիշեցնեն անկից անցած աւերիչ պատերազմախանձոտ աւերակները կը յիշեցնեն անկից անցած աւերիչ պատերազմները: Եւրոպայի, որոնք քաղաքացիական կեանքի բոլոր հանգամանակները կը վայելին, այժմ խոնաւ ու վատառողջ գետնափորներու մէջ կը բնակին. ճարտարապետութեան կրակիւսով ու երկաթով շինած շէնքերը խաւիւր են: ճարտարապետութեան կրակիւսով ու երկաթով շինած շէնքերը խաւիւր են: Եւրոպայի պէս տապալեցան, ու շատերը այսօր ալ գերեզմանն են անոնց՝ Եւրոպայի հոն փնտռեցին իրենց ապաստանարանը ուրակոծութիւններու ժամանակ: Ռումբերու պայթումներու դադարէն վերջ, ապաստանարաններ մանակ: Ռումբերու պայթումներու դադարէն վերջ, ապաստանարաններ մանակ: Ռումբերու պայթումներու դադարէն վերջ, ապաստանարաններ մանակ: Ռումբերու պայթումներու դադարէն վերջ, ապաստանարաններ մանակ: Ռումբերու պայթումներու դադարէն վերջ, ապաստանարաններ մանակ:

Կատաղի պատերազմի մը բնական հետեւանքները, աղքատութիւնն ու թշուառութիւնը, մշտական ընկերն է անոնց ալ որոնք մինչեւ այսօր ու թշուառութիւնը, մշտական ընկերն է անոնց ալ որոնք մինչեւ այսօր ջանքով ու պատուաւոր աշխատանքով կրնային օրուան հացը համեստօրէն շահիլ: Բոլորովին ցնցոտի ու սովամահ ու պատերազմի հոգեբանական ու Ֆիլիքապէս հետեւանքներէն հարուածեալ, բայց լիայրոյս կը սպասեն ու Ֆիլիքապէս հետեւանքներէն հարուածեալ, բայց լիայրոյս կը սպասեն ու Ֆիլիքապէս հետեւանքներէն հարուածեալ, բայց լիայրոյս կը սպասեն լաւագոյն օրերու: Իրենց իղձը կատարուելու վրայ է: Վերաշինութեան զործը առաջ կ'երթայ: Հարկահաւաքաւոր զործաւորներ ապրուստի ապահովութիւն ունին: Զարմանալի է զործի այս նսւիրումը, որ բանուորներու մեծ զանգուածներ աշխատանքի կը լծէ: Մայրաքաղաքի օդ հանուած վեց կամուրջներէն երեքը արդէն վերաշինուած ու կատարելապէս զործածելի են:

Բանուորները կրնան ուրախութեամբ աշխատիլ, ամէն մէկ աղիւսի եւ երկաթէ՝ ձողերու տեղաւորումը ամբողջ ազգը նոր կեանքի ծագկումին կ'առաջնորդէ:

Բայց աւելի դժուարին է մտքի մշակներուն փիճակը: Իրենց գործին արդիւնքը դրեթէ անկարելի է անմիջապէս զգացնել: Եւ սակայն ներքին կարգապահութիւնը, ընկերային դադարներուն անթիւ կարելիութիւնները, պետութեան գոյութիւնը՝ անոր անմիջական հետեւանքներն են:

Կան շատեր ալ որ քաղաքական պատճառներու համար, կամ ազգին բերը կրած ըլլալուն համար, այսօր աւելորդ կը նկատուին ու պաշտօնէն հանուած են: Ասոնք մտաւորական ասպարէզներու մէջ չեն կրնար առաջուան աշխատանքը տանիլ, ուստի կը ջանան Ֆիլիքապէս աշխատութեամբ իրենց գոյութիւնը ապահովել:

Գերութեան դաշտերու մէջ արդեւափակուածները կը սաստկացնեն այս պատերազմի աղէտները, որոնք — ամբոխային ընդհանուր հիւանդ

Հոգեբանության մը ազդեցություն տակ — իրենց հայրենիքը թողուցած են 1944ին վերջերը եւ դեռ այսօր ալ անհայրենիքներու դառն հացը կ'ուտեն: Ասոր տարողութիւնը հայերը կրնան պատմել իրենց դարաւոր ցնցիչ տարաբախտութիւններով:

ՏՊԲԹ • ՖԵԼԻՔՍ ԱՌԵՏԻՔ

Պատարեշարի Պատմական Ատեանի փոխ-նախագահ

ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ժամանակակից կեանքին մէջ շարժանը-կարի կարեւորութիւնը ապացուցուած է արդէն թէ՛ իր նկարագրին եղականութենէն եւ թէ՛ իր դրական պատմութենէն: Բազմակողմանի եւ բաղադրեալ դարու մը մէջ, ուր հակադրութիւններ եւ հակասութիւններ կը բաղադրատուին եւ կը թնճկին, ուր մարդկային կեանքը եւ ընկերութիւնը շրջապատող բոլոր երեւոյթները իրարու հետ շղթայուած են, դարու մը մէջ՝ ուր կը տեսնէ արտաքին կարգի ծաւալում մը զինքը յօրինող ամենահեռաւոր տարրերու, եւ որուն հնամաշ կազմին փշրանքներէն կը սկսին կերպաւորուիլ նոր համադրութեան մը հիմնական դիմերը, այսպիսի դարու մը մէջ, շարժանկարը իր մուտքը կ'ընէ իրրեւ արդիւնք եւ իրրեւ պատճառ, իրրեւ արդասիք եւ իրրեւ ծագում, այսպիսի աշխատավայրերու մէջ, որոնք իրարմէ անբաժան են եւ ուր յաճախ կը քողարկուին կեղծ եւ ճապարհ ոճաւորումներու ետեւ, արհեստական երեւոյթներ, բայց եւ այնպէս ոչ նուազ իրական եւ կարեւոր: Ժամանակակից կեանքին մէջ, խեղապէս շարժանկարը տնտեսական եւ ճարտարարուեստական գոյութիւն մըն է, գոյութիւն մը ընկերային, գոյութիւն մը գեղարուեստական:

Այս լայնատարած եւ բաղադրեալ նը-կարագիրը ցոյց կու տայ իր կարեւորութիւնը, եթէ խորհնք թէ ո՛րքան համա-դաշնակ է իրականութեան. նա ուղղակի

կը մասնակցի ներկայ մարդու իրականու-թեան, ըլլայ իր անհատական երեւոյթ-ներուն մէջ, ըլլայ եւ հաւաքական:

Իր առաջին յայտնութենէն՝ շարժանը-կարը տեսարանի, դուարձութեան եւ ժա-մանցի կերպ մ'է. բայց հակառակ անցեալ դարերու տեսարանական, հաճոյքի եւ ժա-մանցի երեւոյթին, այլեւս ընկերային մասնաւոր խաւերու չի ծառայեր, ըն-տրեալներու որոնք տիրող դասակարգին կը պատկանին եւ կամ քաղքենի ժողովուրդ-ներու մասնակի հատուածներուն. նա կը հրաւիրէ, կը միացնէ ամէն դասակարգէ եւ ամէն տարիքէ ամենալայն զանգում-ներ բոլոր աշխարհիս մէջ. կ'աղղէ անոնց վրայ, կը սահմանաւորէ, կ'ուղղէ, կը լու-սաւորէ եւ կամ կ'ամբանացնէ, անոնց կը սորվեցնէ կամ ճշմարտութիւն եւ կամ սը-տութիւն:

Եւ մասնաւորապէս քանակական այս կերպարանքովն է որ շարժանկարը կ'անցնի ներկայ կեանքին առաջին դժին վրայ: Դա-րերու մէջ իրար յաջորդող բոլոր տեսարա-նական երեւոյթներն են (ինչպէս նաեւ ար-ուեստները, ըլլան դուռ կամ յարմարեալ) որ իրենց մէջ ընդունած են այս տրամա-սական կազմը՝ բաժնուած տնտեսական, ընկերային եւ գեղարուեստական տարրե-րու:

Դարձեալ միւս գեղարուեստներէն ա-ւելի թատրոնը, կրկէսը, դիցարանական ծէսերու հաւաքական արարողութիւնները

կամ բնիկ սովորութիւններն են որ միշտ հայեցողցած են ժամանակին արտադրող կազմաւորումներու բնութիւնը, ձեւերն ու չափանիշերը եւ իրենց ընկերային, մշա-կութային եւ գեղարուեստական ցոլացում-ները: Պատմութեան եւ ընկերութեան ա-մէն մէկ դարձումաճըին համապատասխա-նած է նա գեղարուեստական հա-նար կերպերով, որոնք կը յայտնէին դրութիւնը եւ ցոյց կու տային անոր յա-ռաջադիմական եւ կամ յետադիմական նը-կարագիրը: Այսպէս միապետական քաղա-քակրթութեան մեծ շրջաններուն, դատո-րուած յառաջացող մղումով մը, երբ տնտեսական եւ ընկերային կերպարանա-տիւնները ընկերութեան առջեւ կը բա-փոխումները ընկերութեան առջեւ կը բա-մեծագոյն նուաճումները իրենց տիպակ-տիկ բնոյթը աւելի շեշտած եւ աւելի պայ-ծառացուցած են, ինչպէս նաեւ իրենց խոր զօղը իրականութեան եւ ժողովրդային զօղը զանգումներու հետ: Յունական հին թա-ղանգումներու հետ: Թատրոնը, խոր-տրոնը, հուլիմէական հին թատրոնը, խոր-հրդապաշտ-աւատական սրբազան ներկա-յացումները, անդդիական եղիսարեթեան թատրոնը այս տեսակէտով ամէնէն աւելի հարուստ եւ հասուն շրջաններն եղած են: Կարեւորութենէ զուրկ չէ մատնանշել թէ ինչպէս այս հաւաքական քաղաքակրթու-թեան դարերուն, յորում աշխատաւոր զանգումները լայնօրէն կը մասնակցէին ազգային կեանքին, համապատասխանած ըլլան գեղարուեստական ամէնաարժեքաւոր ըլլան գեղարուեստական ամէնաարժեքաւոր, գործեր, գլուխ գործոցներ: Հակառակէն, երբ արուեստները, որ ի բնէ հաւաքական են, անձուկ դասակարգերու մենաշնորհ ե-ղած են, եւ ալ չունէին կենսունակ պաշտօն մը ընկերութեան մէջ, անկումի մէջ ե-ղած են, այլապէս եւ գրեւորութիւն եւ ձեւապաշտութեան մէջ: Եթէ թատրոնա-կան ներկայացումներուն բնոյթը եւ մտե-րիմ պատմութիւնը այդպէս էր, չէր կըր-նար տարրեր ըլլալ բնոյթը եւ պատմու-

թիւնը շարժանկարին, որ, թատրոնին տարրերութեամբ, ոչ միայն քանի մը հա-ղար հանդիսատեսներ կ'ընդգրկէ՝ այլ մի-լիոններ եւ միլիոններ աշխարհիս ամէն կողմը:

Շարժանկարն է ուրեմն, որ իրրեւ նը-կայացում, (ներկայացում մը գերազան-ցօրէն տարածուն եւ ընդարձակ) հաւա-քական բնութիւն ունեցող իրականութիւն մըն է, այսինքն իր վերջին վերլուծման մէջ՝ ընկերային: Միլիոնաւոր հանդիսա-տեսներու բազմութեան մասնակցութիւնը ժապաւնի մը ցուցադրութեան կը յանդի-անոր՝ որ այս նոյնինքն ժապաւնը դադրի վաճառքի համար արտադրուած ապրանք մ'ըլլալէն, դադրի արտադրուած նիւթ մը ըլլալէն, փոխանակութեան եւ գործածու-թեան մասնակի լոկ արժէքն ունենալէն, այլ ըլլայ միաժամանակ իրականութիւն մը որ կ'ընդգրկէ նոյնինքն իր քաղքենի հան-դիսատեսներուն բարոյական, մտաւորա-կան, զգացողական կեանքը: Արտադրուած իրրեւ ապրանք, (հաղուադիւտ պարագա-ներու մէջ աղնուականացած գեղարուես-տական մտադրութիւններով զինքը յղա-ցողներուն), ժապաւնը իր ցուցադրման պահուն կը հետաքրքրէ անհատը իր տիա-լեկտիկական բաղադրաբաշխարարութիւն-ներով որ զինքը կը կապեն իր ընկերային վիճակին, իր գիտակցութեան, իր մշակոյ-թին, իր դասակարգին, իր բարքերուն, իր ճաշակին, իր բովանդակ կեանքին:

Եթէ ուրեմն թատրոնը կը հետաքրքրէ ժողովուրդներու որոշ հատուածներ, շար-ժանկարը հետաքրքրելով ամբողջ մարդ-կութիւնը, կը պատկերացնէ իր մէջ անոր ճակատագիրը եւ կը նախատեսէ անոր ա-պագայ զարգացումները:

Շարժանկարն ուրեմն լոկ ճարտարա-ուեստական — տնտեսային արտադրութիւն մըն է, ինչպէս պիտի ուզէին դրամատէր-ները՝ որոնք կը գեղավարեն արտադրու-